


1.2 Արտադրություն (ծառայություններ)

1.2.1. Արդյունաբերություն

Արդյունաբերական արտադրանքի ծավալը և իրացումը: 2000թ. հունվար-հոկտեմբերին հանրապետությունում, ըստ 1226 արդյունաբերական կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև ամենամսյա վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ըստ ցածր առաձգականությամբ ապրանքների արտադրության բազային ցուցանիշի), փաստացի գներով, թողարկվել է 242744.3 մլն դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 242060.0 մլն դրամի արտադրանք, այդ թվում ԱՊՀ երկրներում՝ 17712.7 մլն դրամի, այլ երկրներում՝ 36201.3 մլն դրամի արտադրանք:

1999թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 104.3 տոկոս, իսկ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը առանց էներգետիկայի՝ 106.8 տոկոս:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան
տոկոսներով 1998թ. դեկտեմբերի նկատմամբ



Արդյունաբերական արտադրանքի դինամիկան

(տոկոսներով)

	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
1999 թ.			
հունվար	91.3	105.1	91.3
փետրվար	89.7	85.4	81.9
մարտ	126.2	97.9	103.4
ապրիլ	86.6	106.0	89.5
մայիս	98.3	108.3	88.0
հունիս	131.3	118.4	115.5
հուլիս	88.9	123.1	102.7
օգոստոս	108.6	122.7	111.5
սեպտեմբեր	90.1	106.9	100.5
հոկտեմբեր	97.3	106.5	97.8
նոյեմբեր	98.8	100.7	96.6
դեկտեմբեր	112.8	91.4	109.0

	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
2000 թ.			
հունվար	80.7	94.3	80.7
փետրվար	111.1	108.0	89.7
մարտ	105.5	99.4	94.6
ապրիլ	89.0	95.4	84.2
մայիս	111.3	119.8	93.7
հունիս	103.9	102.0	97.4
հուլիս	104.8	104.3	102.1
օգոստոս	103.5	105.9	105.7
սեպտեմբեր	96.7	107.0	102.2
հոկտեմբեր	99.3	107.1	101.5

**Արդյունաբերական արտադրանքի արտադրությունը,
ըստ գործունեության հիմնական տեսակների¹**



	Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, փաստացի գներով ² , մլն դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, փաստացի գներով ² , մլն դրամ	2000թ. հունվար-հոկտեմբերին, արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ֆիզիկական ծավալի ինդեքսը տոկոսով 1999թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ (համադրելի գներով)
Ամբողջ արդյունաբերությունը	242744.3	242060.0	104.3
<i>այդ թվում՝</i>			
Էլեկտրաէներգիա, գազ և ջրամատակարարում	72879.0	72879.0	98.7
Լեռնահանքային արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում	13109.8	11915.9	117.7
Վերանշակող արդյունաբերություն	156755.5	157265.1	105.9
<i>որից՝</i>			
սննդամթերքների արտադրություն	88390.1	88772.1	103.2
ծխախոտի ապրանքների արտադրություն	9561.3	9072.1	106.2
տեքստիլ (մանածագործական) ապրանքների արտադրություն	1291.9	1295.0	152.5
հագուստի արտադրություն	1593.6	1482.6	56.6
կաշվի դաբադում և մշակում, կոշիկի, ճամպուրկների, պայուսակների, թամբա-լծասարքային իրերի արտադրություն	296.7	278.6	104.4
փայտանյութի և փայտե իրերի արտադրություն	684.3	689.5	203.2
քիմիական նյութերի և քիմիական արտադրանքի արտադրություն	7768.2	6255.1	113.8
ռետինե և պլաստմասսայե իրերի արտադրություն	420.9	474.3	76.8
ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն	6062.4	6103.8	75.5
մետալուրգիական արդյունաբերություն	13443.2	14402.7	209.9
մետաղամշակման արդյունաբերություն	1606.7	1762.5	78.0
մեքենաների և սարքավորումների արտադրություն	3353.5	2922.4	130.7
թանկարժեք իրերի արտադրություն	14401.5	14851.9	99.0

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն, ըստ



¹ Արդյունաբերական արտադրանքի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ գործունեության հիմնական տեսակների, առավել մանրամասն գետնողված է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրում (տեղեկագրի ծածկագիրը՝ 1210-201):

² Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:



արտադրության սեկտորների 2000թ. հունվար - հոկտեմբերին





Էլեկտրաէներգիա, գազ և ջրամատակարարում



Լեռնահանքային արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում



Վերանշակող արդյունաբերություն



2000թ. հունվար-հոկտեմբերին արտադրված (հաշվառվող) 108 հիմնական արտադրատեսակներից (բնեղեն արտահայտությամբ) 58 գծով ձեռք է բերվել կամ գերազանցվել նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի արտադրության մակարդակը, այդ թվում արտադրատեսակական նշանակության արտադրանքի՝ 52-ից 30-ի և սպառողական ապրանքների՝ 56-ից 28-ի գծով:

Սպառողական ապրանքների արտադրության ծավալները

(համադրելի բացթողնման զներով, մլն դրամ)

	Փաստացի թողարկումը հունվար-հոկտեմբերին		Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, տոկոսով
	2000 թ.	1999 թ.	
Սպառողական ապրանքներ, ընդամենը	124194.3	114715.1	108.3
<i>այդ թվում՝</i>			
պարենային ապրանքներ	78738.4	75777.7	103.9
ալկոհոլային խմիչքներ (ներառյալ գարեջուրը)	14974.6	10168.9	147.3
ոչ պարենային ապրանքներ, ընդամենը	30481.3	28768.5	106.0
<i>այդ թվում՝</i>			
թեթև արդյունաբերության	6352.5	8771.2	72.4
մշակութային և տնտեսական նշանակության	24128.8	19997.3	120.7

Ընդհանուր առմամբ, 2000թ. հունվար-հոկտեմբերին հանրապետությունում թողարկվել է 4873.8 մլն կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է 1999թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 100.2 տոկոսը: Ընդ որում, ՋԷԿ-երում և ՋԷԿ-երում արտադրված էլեկտրաէներգիան ավելացել է համապատասխանաբար 17.1 և 1.3 տոկոսով, իսկ ՅԱԷԿ-ում նվազել է 7.8 տոկոսով:

2000թ. հունվար-հոկտեմբերին ՅԱԷԿ-ը թողարկել է 1715.0 մլն կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է հաշվետու ժամանակաշրջանում հանրապետությունում թողարկված ամբողջ էլեկտրաէներգիայի 35.2 տոկոսը, ՋԷԿ-երը, համապատասխանաբար 2128.3 մլն կվտ ժամ և 43.7 տոկոսը, ՋԷԿ-երը՝ 1030.5 մլն կվտ ժամ և 21.1 տոկոսը:

2000թ. հունվար-հոկտեմբերին հանրապետությունում թողարկվել է 529.9 հազ.Յկալ ցերմային էներգիա, որը կազմել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 104.1 տոկոսը:

2000թ. հունվար-հոկտեմբերին սննդի արդյունաբերության ճյուղի կազմակերպությունների կողմից հիմնական արտադրատեսակների թողարկումը³

	2000 թ. հունվար-հոկտեմբեր	1999 թ. հունվար-հոկտեմբեր	2000 թ. հունվար- հոկտեմբերը տոկոսով 1999 թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ
Ձկան որս, տոննա	259.8	328.5	79.1
Միս ⁴ , տոննա	25394	23200	109.5
Երշիկեղեն, տոննա	382.2	371.5	102.9
Պանիր ⁴ , տոննա	3562	3581	99.5
Պաղպաղակ, տոննա	812.3	695.8	116.7
Կաթ և կաթնամթերք (վերահաշվարկված կաթի) ⁴ , հազ. տոննա	249.6	246.5	101.3
Պահածո, հազ. պայմ. քանկա	64198.0	48252.5	133.0

³ Այստեղ և հետայսու բերված տեղեկատվությունը առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» վիճակագրական տեղեկագրում (տեղեկագրի ծածկագիրը՝ 1210-202):

⁴ Ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառումը):
 14 «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000թ. հունվար-հոկտեմբերին»

	2000 թ. հունվար- հոկտեմբեր	1999 թ. հունվար- հոկտեմբեր	2000 թ. հունվար- հոկտեմբերը տոկոսով 1999 թ. հունվար- հոկտեմբերի նկատմամբ
Ալյուր, հազ. տոննա	122.3	116.9	104.6
Չավարեղեն, տոննա	34.4	260.0	13.2
Հաց և հացամթերք, հազ. տոննա	303.7	307.0	98.9
Հրուշակեղեն, տոննա	1910	643	3 անգամ
Սակարոնեղեն, տոննա	792.0	609.5	129.9
Օղի, հազ. լիտր	7734	6191	124.9
Կոնյակ, հազ. լիտր	2138.3	811.9	2.6 անգամ
Խաղողի գինի, հազ. լիտր	1458.4	3107.7	46.9
Շամպայն գինի, հազ. շիշ	464.2	610.3	76.1
Գարեջուր, հազ. լիտր	7186.7	7483.1	96.0
Ոչ ալկոհոլային ըմպելիքներ հազ. լիտր	14893	18367	81.1
Հանքային ջրեր, հազ. 0,5 լ շիշ	28044	17425	160.9
Աղ, տոննա	22779	20368	111.8
Սիգարետներ, մլն. հատ	1769.2	2874.5	61.5

2000թ. հունվար-հոկտեմբերին *թեթև* արդյունաբերության ճյուղի կազմակերպությունների կողմից հիմնական արտադրատեսակների թողարկումը

	2000 թ. հունվար- հոկտեմբեր	1999 թ. հունվար- հոկտեմբեր	2000 թ. հունվար-հոկտեմբերը տոկոսով 1999 թ. հունվար- հոկտեմբերի նկատմամբ
Բամբակյա գործվածքներ, հազ. մ ²	162.0	144.2	112.3
Բրդյա գործվածքներ, հազ. մ ²	26.1	5.4	4.8 անգամ
Մետաքսյա գործվածքներ, հազ. մ ²	15.0	21.0	71.4
Գորգեր և գորգեղեն, հազ. մ ²	15.9	16.0	99.4
Գուլպեղեն, հազ. գույգ	725.2	321.9	2.3 անգամ
Տրիկոտաժեղեն, հազ. հատ	1449.0	1515.9	95.6
Բամբակյա մանվածքաթելեր, տոննա	76.3	48.1	158.6
Բրդյա մանվածքաթելեր, տոննա	10.9	22.4	48.7
Կարի արտադրանք, մլն. դրամ	5082.2	7517.6	67.6

2000թ. հունվար-հոկտեմբերին *քիմիական* արդյունաբերության ճյուղի հիմնական արտադրատեսակներից սինթետիկ կաուչուկի արտադրությունը 1999թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 40.6%-ով, կաուստիկ սոդայինը՝ 23.4%-ով, լաքաներկանյութերինը՝ 14.9%-ով, իսկ քիմիկա-դեղագործական և պլաստմասսայից իրերի արտադրության ծավալները նվազել են, համապատասխանաբար, 6.0 և 43.8 տոկոսով:

2000թ. հունվար-հոկտեմբերին *շինանյութերի* արդյունաբերության ճյուղի կազմակերպությունների կողմից հիմնական արտադրատեսակների թողարկումը

	2000 թ. հունվար- հոկտեմբեր	1999 թ. հունվար- հոկտեմբեր	2000 թ. հունվար- հոկտեմբերը տոկոսով 1999թ. հունվար- հոկտեմբերի նկատմամբ
Հավաքովի երկաթբետոնե կառուցվածքներ, մ ³	16050	36582	43.9
Ապրանքային բետոն, մ ³	12868	17355	74.1
Երեսպատման սալեր բնական քարից, մ ²	35862	32494	110.4
Ոչ հանքային շինանյութեր, հազ. մ ³	59.7	125.8	47.5
Կիր, տոննա	3653	3074	118.8
Գաջ, տոննա	8695	9782	88.9
Ցեմենտ, հազ. տոննա	193.2	252.7	76.5
Կանոնավոր կտրվածքի տուֆ, հազ. մ ³	43.9	60.8	72.3
Ծակոտկեն լցանյութեր, հազ. մ ³	73.6	86.8	84.8
Կլինկեր, հազ. տոննա	214.4	248.5	86.3
Ալյումինե համաձուլվածքներից կառուցվածքներ և իրեր, տոննա	6.1	26.2	23.3

Մետալուրգիական արդյունաբերության ճյուղի կազմակերպությունների կողմից հաշվետու ժամանակաշրջանում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ալյումինե փայլաթիթեղի արտադրությունը ավելացել է 24.7 անգամ, սև պղնձինը՝ 11.3 անգամ, ալյումինե գլանվածքինը՝ 5.1 անգամ, պողպատե ձուլվածքինը՝ 3.4 անգամ և պղինձ՝ պղնձե խտանյութում՝ 15.1%-ով:

2000թ. հունվար – հոկտեմբերին մեքենաշինության ճյուղի կազմակերպությունների կողմից հիմնական արտադրատեսակների թողարկումը

	2000 թ. հունվար- հոկտեմբեր	1999 թ. հունվար- հոկտեմբեր	2000 թ. հունվար- հոկտեմբերը տոկոսով 1999 թ. հունվար- հոկտեմբերի նկատմամբ
Մետաղահատ հաստոցներ, հատ	134	117	114.5
Ռելեներ, հազ. հատ	105.7	73.2	144.3
Ռեժային ճկուն կաբելներ, կմ	8.5	24.2	35.1
Ռեժային կաբելներ մինչև 1կՎ լարման համար, կմ	1127	195	5.8 անգամ
Շարժական էլեկտրակայաններ, հատ	24	-	-
Ռեժային տրանսֆորմատորներ, հատ	18	-	-
Ավտոմեքենաներ, հատ	13	3	4.3 անգամ
Տեղակայման հաղորդալարեր, կմ	3684	1233	3 անգամ
Ճնշակներ, հատ	1	76	1.3
Կենտրոնախույս պոմպեր, հատ	2436	46	53 անգամ
Փոքր հզորության էլեկտրաշարժիչներ, հատ	3454	170	20.3 անգամ